

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ԵՆԹԱԿԱ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ

I.ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակային և հիգիենիկ միասնական պահանջները (այսուհետ՝ Միասնական սանիտարական պահանջները) սահմանում են Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանում և Եվրասիական տնտեսական տարածքում սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքների միասնական ցանկում (այսուհետ՝ ապրանքների Միասնական ցանկ) ընդգրկված վերահսկողության ենթակա ապրանքների անվտանգության նորմատիվներ և հիգիենիկ ցուցանիշներ:

2. Սույն Միասնական սանիտարական պահանջների խախտումների համար անձինք կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

II.ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

3. Սույն Միասնական սանիտարական պահանջներում կիրառվում են հետևյալ տերմինները և դրանց սահմանումները.

1) **սանիտարահիգիենիկ հետազոտություն (փորձարկում)**՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված և Հայաստանի Հանրապետության կառավարության նշանակած լաբորատորիաներում վերահսկողության ենթակա սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի սանիտարահամաճարակային և հիգիենիկ գնահատում (փորձաքննություն)՝ մեկ կամ մի քանի բնութագրերի քանակական կամ որակական որոշմամբ.

2) **հետազոտության (փորձարկման) արձանագրություն**՝ վերահսկողության ենթակա ապրանքի հետազոտության (փորձարկման), օգտագործվող մեթոդաբանությունների, միջոցների և հետազոտության (փորձարկումների) պայմանների, դրանց արդյունքների մասին անհրաժեշտ տեղեկություններ պարունակող և սահմանված կարգով ձևակերպված փաստաթուղթ.

3) **հետազոտությունների (փորձարկումների/չափումների) կատարման մեթոդաբանություն**՝ գործողությունների և կանոնների համատեղություն, որոնց կատարումը ապահովում է որոշակի հայտնի շեղումով հետազոտությունների

(փորձարկումների/չափումների) արդյունքների ստացում.

4) **տիպային օրինակ** միևնույն արտադրողի կողմից միևնույն տեխնոլոգիական գործընթացում պատրաստված, միևնույն հումքային և բաղադրիչային կազմ ու կիրառման ոլորտ ունեցող միատիպ արտադրանքի շարքից ընտրված ներկայացուցչական օրինակ: Տիպային օրինակների քանակը պետք է կազմի հետազոտության համար ներկայացված արտադրանքի ցանկի 30%-ից ոչ պակաս:

4. Տերմինները, որոնք հատուկ սահմանված չեն սույն պահանջներում, օգտագործվում են Եվրասիական տնտեսական միության սահմանը հատող անձանց և փոխադրամիջոցների, Եվրասիական տնտեսական միության սահմանով և Եվրասիական տնտեսական տարածքում տեղաշարժվող վերահսկողության ենթակա ապրանքների նկատմամբ պետական սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի, այլ միջազգային, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքած պայմանագրերով սահմանված նշանակությամբ:

III.ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՎԱՅԻՆ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ

5. Չի թույլատրվում վերահսկողության ենթակա ապրանքների վտանգավոր ազդեցությունը ներկա և ապագա սերնդի, քաղաքացիների գույքի և ունեցվածքի, մարդու ապրելու և շրջակա միջավայրի վրա:

6. Սպառողի համար տեղեկատվության բովանդակությունը և տրամադրման եղանակը հնարավոր են դարձնում ապրանքի և դրա արտադրողի նույնականացումը, ինչպես նաև բավարարում են ապրանքների մակնշմանը ներկայացվող պահանջները, որոնք սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և տեխնիկական կանոնակարգման բնագավառում տվյալ ապրանքի տեսակին առնչվող նորմատիվ փաստաթղթերով:

IV.ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ) ՄԵԹՈԴՆԵՐԸ

7. Միասնական սանիտարական պահանջներին վերահսկողության ենթակա ապրանքների համապատասխանության գնահատման ժամանակ օգտագործվում են հաստատված միևնույն կամ համադրելի հետազոտության (փորձարկման) մեթոդներ:

8. Հետազոտություններն անցկացվում են Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված լաբորատորիաներում, որոնք ընդգրկված են Եվրասիական տնտեսական Միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում:

9. Եթե անվտանգության ցուցանիշի նորմատիվը սահմանված է «չի թույլատրվում», պարտադիր է դառնում համապատասխան ցուցանիշի որոշման համար պաշտոնապես

թույլատրված նվազագույն զգայուն մեթոդի հայտնաբերման սահմանի նշումը:

10. Սննդամթերքի անվտանգության բնագավառում լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին) տեղեկացնում է Եվրասիական տնտեսական Միության անդամ պետությունների համապատասխան լիազոր մարմիններին գնահատման համար կիրառվող հետազոտությունների (փորձարկումների) անցկացման մեթոդաբանությունների, ինչպես նաև վերահսկողության ենթակա ապրանքների գնահատման համար կիրառվող նոր ներկայացրած մեթոդաբանությունների մասին:

11. Անցկացված հետազոտությունների (փորձարկումների) արդյունքների հիման վրա ձևակերպվում է հետազոտությունների (փորձարկումների) արձանագրություն:

12. Հետազոտությունների անցկացման ժամանակ թույլատրվում է ապրանքների խմբից տիպային օրինակի օգտագործումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԻԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՀԱՆՁՆԵՐ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՆՆԴԱՅԻՆ ԱՐԺԵՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Սննդամթերքի անվտանգության սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջները (հետագայում՝ Միասնական սանիտարական պահանջները) տարածվում են համաձայն ապրանքների դասակարգման ըստ միասնական Եվրասիական տնտեսական միության ԱՏԳ ԱԱ (հետագայում՝ ԱՏԳ ԱԱ) ծածկագրերով սննդամթերքի վրա:

II. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

2. Միասնական սանիտարական պահանջներում օգտագործվում են հետևյալ տերմինները և սահմանումները.

1) **սպառման համարժեք (ադեկվատ) մակարդակ**՝ սննդային կամ կենսաբանական ակտիվ հավելումների օրական սպառման մակարդակը, որը սահմանվել է հաշվարկային կամ փորձնական կարգով որոշված մեծությունների կամ գործնականում առողջ մարդկանց խմբի/խմբերի կողմից սննդային կամ կենսաբանական ակտիվ հավելումների սպառման գնահատման հիման վրա.

2) **սպառման վերին թույլատրելի մակարդակ**՝ սննդային կամ կենսաբանական ակտիվ հավելումների օրական սպառման առավելագույն մակարդակը, որը գործնականում բոլոր 18 տարեկանից բարձր անձանց մոտ չի ներկայացնում առողջության վիճակի ցուցանիշների վրա անբարենպաստ ազդեցությունների զարգացման վտանգ.

3) **Ֆիզիոլոգիական կարիքների նորմեր**՝ մարդու գենոտիպում ամրագրված ֆիզիոլոգիկենսաքիմիական գործընթացների լավագույն իրականացումը ապահովող սննդային կամ կենսաբանական ակտիվ հավելումների անհրաժեշտ մուտքի միջինացված մեծություն.

4) **վաղ հասակի երեխաներ**՝ մինչև 3 տարեկան երեխաներ:

3. Տերմինները, որոնք հատուկ սահմանված չեն սույն պահանջներում, օգտագործվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքած միջազգային պայմանագրերով սահմանված նշանակությամբ:

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Սննդամթերքը պետք է բավարարի մարդկանց ֆիզիոլոգիական կարիքները, պարունակելով անհրաժեշտ նյութեր և էներգիա, համապատասխանի սննդամթերքին զգայորոշման ու ֆիզիկաքիմիական ցուցանիշներով ներկայացվող պահանջներին և նորմատիվ փաստաթղթերով սահմանված քիմիական, կենսաբանական ակտիվ նյութերի և դրանց միացությունների, մանրէների և այլ օրգանիզմների թույլատրելի պարունակությանը ներկայացվող պահանջներին, որոնք վտանգ են ներկայացնում ներկա ու ապագա սերունդների առողջությանը:

5. Սննդամթերքի նոր տեսակների (որոնք ստացվել են հումքի ոչ ավանդական տեսակներից), սննդամթերքի արտադրության, փաթեթավորման, պահման, տեղափոխման նոր տեխնոլոգիական գործընթացների (Հայաստանի Հանրապետության տարածքում նախկինում չօգտագործված) մշակման ժամանակ իրավաբանական անձինք ու անհատ ձեռնարկատերերը սահմանում են անվտանգության և սննդային արժեքի պահանջները, պիտանիության ժամկետները, ինչպես նաև մշակում փորձարկումների մեթոդաբանությունները:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում նոր սննդամթերքի արտադրությունը, առաջին անգամ Հայաստանի Հանրապետության տարածք սննդամթերքի ներմուծումը թույլատրվում է միայն Միասնական սանիտարական պահանջներին դրանց համապատասխանությունը գնահատելուց հետո:

7. Մինչև Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելը ներմուծվող սննդամթերքը ենթակա է Միասնական սանիտարական պահանջներին համապատասխանության գնահատման:

8. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և այդ տարածքում շրջանառվող սննդամթերքն ուղեկցվում է արտադրողի (մատակարարի) կողմից սննդամթերքի անվտանգությունը հավաստող փաստաթղթով:

9. Միասնական սանիտարական պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հիման վրա լիազոր մարմնի կողմից տրվում է արտադրանքի (ապրանքի) անվտանգությունը հավաստող փաստաթուղթ:

10. Բուսական ծագման պարենային հումքի համար պարտադիր է գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ժամանակ պեստիցիդների օգտագործման (կամ չօգտագործելու), մշակաբույսերի պահման տարածքների և տարաների մաքրման և ախտահանման, վնասատուների դեմ պայքարի վերաբերյալ տեղեկատվությունը:

11. Կենդանական ծագման պարենային հումքի համար պարտադիր է արտաքին մակաբույծների կամ կենդանիների և թռչունների հիվանդությունների դեմ պայքարի ժամանակ խոզաբուծարանների և թռչնաբուծարանների տարածքների, ձկների բուծման ջրամբարների, լճակային տնտեսությունների մշակման համար օգտագործվող (կամ չօգտագործվող) պեստիցիդների (պեստիցիդի անվանման նշմամբ), ինչպես նաև կենդանիների, թռչունների, ձկների և մեղուների կերակրման և հիվանդությունների բուժման ու կանխարգելման համար կիրառվող անասնաբուժական դեղամիջոցների

(անասնաբուժական դեղամիջոցի անվանման նշամար) վերաբերյալ տեղեկատվությունը:

12. Կենդանական և բուսական ծագման պարենային հումքի արտադրության ժամանակ պեստիցիդների և/կամ անասնաբուժական դեղամիջոցների կիրառման (կամ չկիրառելու) վերաբերյալ տեղեկատվության բացակայության դեպքում տվյալ պարենային հումքի ներմուծումն ու շրջանառությունը չի թույլատրվում:

13. Թռչնի մսեղիքի մշակման համար չի թույլատրվում խմելու ջրի համար պահանջները գերազանցող խտությամբ քլոր պարունակող լուծույթների օգտագործումը:

14. Պարենային հումքն ու սննդամթերքը չափաճրարվում և փաթեթավորվում են սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվելու համար թույլատրված նյութերով այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս ապահովել դրանց որակն ու անվտագությունը պահման, փոխադրման և իրացման փուլերում:

15. Չի թույլատրվում մանկական սննդամթերքի (բոլոր տարիքային խմբերի, այդ թվում՝ կազմակերպված մանկական կոլեկտիվների համար), դիետիկ (բուժիչ և կանխարգելիչ), հղի և կերակրող կանանց համար հատուկ նշանակության սննդամթերքի, դելիկատեսային (բաստուրմա, հում ապխտած մթերք) արտադրանքի արտադրության համար թռչնի մսի օգտագործումը, բացառությամբ պաղեցված մսի, մեխանիկական մսաթափված թռչնի մսի և կոլագենպարունակող հումքի: Չի թույլատրվում թռչնի մսի օգտագործումը (բացառությամբ պաղեցված թռչնի մսի) բնական պաղեցված կիսապատրաստվածքների և թռչնի մսից ջերմային մշակման չենթարկված սննդամթերքի արտադրության համար:

IV.ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

16. Սննդամթերքի առանձին տեսակների համար (մանկական, դիետիկ, հատուկ նշանակության սննդամթերք, պրոբիոտիկ մթերք, սննդային և կենսաբանական ակտիվ հավելումներ, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ պարունակող սննդամթերք և այն) նշվում են՝

1) կիրառման ոլորտը (մանկական, դիետիկ, հատուկ նշանակության սննդամթերքի, սննդային և կենսաբանական ակտիվ հավելումների, բուրավետիչների համար)։

2) սննդամթերքի կազմի մեջ մտնող բաղադրիչների անվանումները, սննդային հավելումները, մանրէների կուլտուրաները, թթխմորները և նյութերը, որոնք օգտագործվում են սննդամթերքի հարստացման համար: Կենսաբանական ակտիվ հավելումների և կենսաբանական ակտիվ բաղադրիչների համար հարստացած սննդամթերքի մակնշման մեջ նշում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված օրական ֆիզիոլոգիական կարիքի տոկոսը, եթե նման կարիք սահմանված է.

3) օգտագործման, կիրառման և անհրաժեշտության դեպքում օգտագործման հակացուցումների վերաբերյալ խորհրդատվություն.

4) կենսաբանական ակտիվ հավելումների համար պարտադիր նշվում է, «Չի

հանդիսանում դեղամիջոց».

5) գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ պարունակող սննդամթերքի, այդ թվում՝ դեզօքսիրիբոնուկլեինաթթու (ԴՆԹ) և սպիտակուց չպարունակող սննդամթերքի համար պարտադիր է նշել, որ այն գենետիկորեն ձևափոխված սննդամթերք կամ գենինժեներային ձևափոխված օրգանիզմներից ստացված սննդամթերք կամ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներ պարունակող սննդամթերք է (սննդամթերքում 0,9% և պակաս գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների կիրառմամբ ստացված բաղադրիչների պարունակությունը համարվում է պատահական կամ տեխնիկապես անվերանալի խառնուկ և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների բաղադրիչների նշված քանակ պարունակող սննդամթերքը չի դասվում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների կիրառմամբ ստացված բաղադրիչներ պարունակող սննդամթերքի դասին)։

6) գենինժեներային ձևափոխված միկրոօրգանիզմներից (մանրէներ, խմորասնկեր, բորբոսասնկեր, որոնց գենետիկական նյութը փոփոխված է գենային ինժեներիայի մեթոդների օգնությամբ) (հետագայում ԳՁՄ) կամ դրանց օգտագործմամբ ստացված սննդամթերքի համար պարտադիր է հետևյալ տեղեկատվությունը՝

ա. կենդանի ԳՁՄ պարունակողների համար՝ «Մթերքը պարունակում է կենդանի գենինժեներային ձևափոխված միկրոօրգանիզմներ»։

բ. ոչ կենսունակ ԳՁՄ պարունակողների համար՝ «Մթերքը ստացվել է գենինժեներային ձևափոխված միկրոօրգանիզմների օգտագործմամբ»։

գ. տեխնոլոգիական ԳՁՄ-ներից ազատվածների կամ ԳՁՄ-ներից ազատված բաղադրիչների կիրառմամբ ստացվածների համար՝ «Մթերքը պարունակում է գենինժեներային ձևափոխված միկրոօրգանիզմների օգտագործմամբ ստացված բաղադրիչներ»։

7) առանց պեստիցիդների և բույսերի պաշտպանության այլ միջոցների, թունաքիմիկատների, կենդանիների աճի և կերակրման խթանիչների, հակաբիոտիկների, հորմոնալ և անասնաբուժական միջոցների, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների, իոնացնող ճառագայթման կիրառման չենթարկված հումքից արտադրությունը ապահովող տեխնոլոգիաներով ստացված սննդամթերքի համար նշվում է «օրգանական մթերք» տեղեկատվությունը։

8) մարզիկների սննդում օգտագործելու համար նախատեսված հատուկ նշանակության սննդամթերքի համար, որն ունի կանխամտածված սննդային ու էներգետիկ արժեք և ուղղորդված արդյունավետություն և կազմված է նուտրիենտների խմբից կամ դրանց առանձին տեսակներից, նշվում է «հատուկ նշանակության սննդամթերք մարզիկների համար» տեղեկատվությունը,

9) մարզիկների համար հատուկ նշանակության սննդամթերքի սպառողական տարայի վրա լրացուցիչ նշվում է մթերքի սննդային և էներգետիկ արժեքի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված օրական ֆիզիոլոգիական կարիքի չափը, ընդունման չափը, պատրաստման եղանակները (անհրաժեշտության դեպքում), օգտագործման պայմանները և տևողությունը։

10) պարենային հումքի և սննդամթերքի սննդային և էներգետիկ արժեքների մակնշման ժամանակ սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի և էներգետիկ արժեքի մասին տեղեկությունները զետեղվում են այն դեպքում, եթե դրանց քանակը պարենային հումքի կամ սննդամթերքի 100 գրամում (մլ) 2 %-ով, իսկ հանքային նյութերի և վիտամինների քանակը 5 %-ով գերազանցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված օրական ֆիզիոլոգիական կարիքի չափը: Սուրճի, թեյի, քացախի, կերակրի աղի և այլ համեմունքների համար սննդային և էներգետիկ արժեքի մակնշում չի պահանջվում:

11) սպանդի ենթարկված կենդանիների և թռչունների մսի, ենթամթերքի, ինչպես նաև բոլոր տեսակի սննդամթերքի կազմի մեջ մտնող սպանդի ենթարկված կենդանիների և թռչնի մսի համար նշվում է ջերմամշակման տեսակը՝ «պաղեցված» (պաղեցված է համարվում կենդանիների կամ թռչունների սպանդից անմիջապես հետո ստացված միսը, ենթամթերքը, որոնք ենթարկվել են պաղեցման մինչև մսի խորքում 0 °C մինչև +4 °C ջերմաստիճանը, առանց խոնավ մակերեսի, ունի չորացման կեղև, կենդանիների կամ թռչունների սպանդից անմիջապես հետո ստացված միսը, ենթամթերքը, որոնք ենթարկվել են պաղեցման մինչև մսի խորքում 0 °C մինչև +4 °C ջերմաստիճանը):

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված այլ տեղեկատվություն:

17. «Դիետիկ», «բուժիչ», «կանխարգելիչ», «մանկական», «պրոբիոտիկ» տերմինների կամ դրանց համարժեք սահմանումների օգտագործումը սննդամթերքի անվանման մեջ, սպառողական տարայի վրա և մթերքին կից գովազդային թերթ-ներդրակներում կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. «Էկոլոգիապես մաքուր մթերք» տերմինի օգտագործումը անվանման մեջ և հատուկ նշանակության սննդամթերքի սպառողական տարայի վրա տեղեկատվության զետեղման ժամանակ, ինչպես նաև օրենսդրական և գիտական հիմնավորում չունեցող այլ տերմինների օգտագործումը չի թույլատրվում:

V.ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՆՆԴԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

19. Միասնական սանիտարական պահանջները սահմանում են սննդամթերքի անվտանգության հիգիենիկ պահանջները և դրանց՝ մարդու ֆիզիոլոգիական կարիքները բավարարելու հնարավորությունները հիմնական սննդային նյութերի և էներգիայի մասով:

20. Սննդամթերքի զգայորոշման հատկությունները չեն փոփոխվում դրա պահման, փոխադրման (տեղափոխման) ժամանակ և իրացման գործընթացում:

21. Սննդամթերքը չի կարող ունենալ դրա փչացման մասին վկայող կողմնակի հոտեր, համ, ներխառնուկներ, գույնի, հոտի և կազմվածքի փոփոխություններ:

22. Կենդանական ծագման պարենային հումքի արտադրության ժամանակ չի

թույլատրվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհամապատասխանող անասնաբուժական միջոցների (կերային հավելումների, կենդանիների աճի խթանիչների, այդ թվում՝ հորմոնների, անասնաբուժական դեղամիջոցների, այդ թվում՝ հակաբիոտիկների), կենդանիների, թռչունների մշակման, ինպես նաև դրանց պահման համար նախատեսված տարածքների մշակման համար միջոցների օգտագործումը:

23. Բուսական ծագման պարենային հումքի արտադրության ժամանակ չի թույլատրվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված պեստիցիդների օգտագործումը:

24. Մանրէաբանական և մակաբուծական, ինպես նաև քիմիական ծագման աղտոտիչների պարունակության առումներով սննդամթերքի անվտանգությունը որոշվում է սահմանված անվտանգության հիգիենիկ նորմատիվներին համապատասխան:

25. Սննդամթերքի անվտանգության և սննդային արժեքի ցուցանիշների (այդ թվում՝ կենսաբանական ակտիվ հավելումների, խառը կազմի) որոշումը իրականացվում է ըստ հումքի հիմնական տեսակների, ինչպես զանգվածային մասով, այնպես էլ նորմավորվող աղտոտիչների թույլատրելի մակարդակներով:

26. Չոր, խտացված կամ նոսրացված սննդամթերքի անվտանգության ցուցանիշների որոշումը իրականացվում է առաջնային մթերքի վերահաշվարկով՝ հաշվի առնելով հումքում և վերջնական արտադրանքում չոր նյութերի պարունակությունը:

27. Հիգիենիկ նորմատիվները տարածվում են այն հավանական վտանգավոր քիմիական միացությունների և կենսաբանական օբյեկտների (մանրէներ և դրանց թույներ, մակաբույծներ, միաբջիջներ) վրա, որոնց առկայությունը սննդամթերքում չի գերազանցում հետազոտվող մթերքի տրված զանգվածում (ծավալում) դրանց պարունակության թույլատրելի մակարդակները:

28. Սննդամթերքում հսկվում է մարդու առողջության համար վտանգ ներկայացնող նորմավորվող քիմիական աղտոտիչների պարունակությունը:

29. Թունավոր տարրերի պարունակության թույլատրելի մակարդակների հիգիենիկ պահանջները ներկայացվում են սննդամթերքի և պարենային հումքի բոլոր տեսակներին:

30. Միկոտոքսինների (B1 աֆլատոքսինի, դեզօքսինիվալենոլի (ոմիտոքսինի), զեարալենոնի, ֆումոնիզինի, T-2 տոքսինի, պատուլինի) պարունակությունը հսկվում է բուսական ծագման սննդամթերքում և պարենային հումքում, M1 աֆլատոքսինի պարունակությունը՝ կաթում և կաթնամթերքում: Հացահատիկայաին մթերքների համար կարևոր աղտոտիչներ են հանդիսանում դեզօքսինիվալենոլը, ընկույզների և յուղատու մշակաբույսերի սերմերի համար՝ B1 աֆլատոքսինը, պտուղների և բանջարեղենի վերամշակման մթերքների համար՝ պատուլինը:

31. A օխրատոքսինի պարունակությունը հսկվում է պարենային հումքում և ալրածավարային արտադրանքներում, ֆումոնիզինի պարունակությունը՝ եգիպտացորենում և դրա վերամշակման մթերքներում:

32. Մանկական և դիետիկ սննդամթերքում չի թույլատրվում միկոտոքսինների առկայությունը:

33. Պարենային հումքի և սննդամթերքի բոլոր տեսակներում հսկվում են պեստիցիդները՝ համընդհանուր աղտոտիչները, հեքսաքլորցիկլոհեքսանը (ալֆա, բետտա, գամմա իզոմերները), ԴԴՏ և դրա նյութափոխանակիչները: Հացահատիկում և դրա վերամշակման մթերքներում հսկվում են նաև սնդիկօրգանական պեստիցիդները, 2,4-Դ թթուն, դրա աղերն ու եթերները: Ձկներում և վերամշակման մթերքներում հսկվում են նաև 2,4 –Դ թթուն, դրա աղերն ու եթերները:

34. Գլոբալ /համընդհանուր/ աղտոտիչների, բացառությամբ 35-րդ կետում նշված պեստիցիդների մնացորդային քանակների, որոշումը կատարվում է սննդամթերք արտադրողի (մատակարարի) կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ժամանակ տրամադրված պեստիցիդների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման համար մատակարարման ժամանակ: Գյուղատնտեսության մեջ կիրառվող պեստիցիդների մնացորդային քանակների պարունակության մակարդակների գնահատումը իրականացվում է շրջակա միջավայրի օբյեկտներում պեստիցիդների պարունակության հիգիենիկ նորմատիվներին համապատասխան:

35. Սննդամթերքի բոլոր խմբերում նորմավորվում են դիօքսինները: Մանկական սննդամթերքում դիօքսիններ չեն թույլատրվում: Դիօքսինների պարունակության նկատմամբ հսկողությունը իրականացվում է արտադրողի (ներմուծողի, մատակարարի) և/կամ հսկողություն (վերահսկողություն) իրականացնող լիազոր մարմնի կողմից միայն բնապահպանական վիճակի վատթարացման, վթարների, տեխնաձին և բնական աղետների հետևանքով դիօքսինների առաջացման և շրջակա միջավայր ներթափանցման և պարենային հումքում դիօքսինների հնարավոր առկայության մասին հիմնավոր կասկածների ժամանակ:

36. Կենդանական ծագման մթերքում, այդ թվում՝ մանկական սննդամթերքում, հսկվում են կենդանիների աճը խթանող անասնաբուժական միջոցների, (այդ թվում՝ հորմոնների), դեղամիջոցների (այդ թվում՝ հակաբիոտիկների) մնացորդային քանակները, որոնք օգտագործվում են կենդանիների, թռչունների, լճակային պահման ձկների և մեղվաընտանիքների կերակրման, հիվանդությունների բուժման և կանխարգելման նպատակով:

37. Սպանդի ենթարկված կենդանիների, թռչունների, լճակային պահման ձկների մսի, մսամթերքի, ենթամթերքների մեջ, ինչպես նաև մեղվաբուծության արտադրանքում հսկվում է անասնաբուծությունում և անասնաբուժությունում առավել հաճախ օգտագործվող կերային և բուժիչ հակաբիոտիկների պարունակությունը (համաձայն Միասնական սանիտարական պահանջներով սահմանված ցուցանիշների)՝

1) բացիտրացին (A, B, C բացիտրացիններ, ցինկբացիտրացին)։

2) տետրացիկլինի խումբ (տետրացիկլին, օքսիտետրացիկլին, քլորտետրացիկլին՝ առաջնային նյութերի և դրանց 4-էպիմերների գումարը)։

3) պենիցիլինի խումբ (բենզիլպենիցիլին, ֆենօքսիմեթիլպենիցիլին, ամպիցիլին, ամօքսիցիլին, պենետամատ)։

4) ստրեպտոմիցին։

5) լեվոմիցետին (քլորամֆենիկոլ):

38. Կենդանիների, թռչունների, լճակային պահման ձկների և մեղվաընտանիքների կերակրման, հիվանդությունների բուժման և կանխարգելման նպատակով անասնաբուժության մեջ օգտագործվող սույն որոշման 37-րդ կետում չնշված անասնաբուժական միջոցների, կենդանիների աճի խթանիչների (այդ թվում՝ հորմոնների), դեղամիջոցների (այդ թվում՝ հակաբիոտիկների) պարունակության նկատմամբ հսկողությունն իրականացվում է սննդամթերք և պարենային հումք արտադրողի (մատակարարի) կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ժամական տրամադրված դրանց օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման համար մատակարարման ժամանակ: Նշված միջոցների առավելագույն թույլատրելի քանակները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

39. Պոլիքլորացված բիֆենիլները հսկվում են ձկներում և ձկնամթերքներում, ձկնամթերքի հիմքով ստացված կենսաբանական ակտիվ հավելումներում, բենզ(ա)պիրենը՝ հացահատիկում, ապխտած մսամթերքում և ձկնամթերքում:

40. Սննդամթերքում մելամինի առկայությունը չի թույլատրվում: Կաթում և կաթնամթերքում մելամինի պարունակության նկատմամբ հսկողությունն իրականացվում է պարենային հումքում դրա հնարավոր առկայության հիմնավորված ենթադրության դեպքում:

41. Բենզ(ա)պիրենի առկայությունը չի թույլատրվում մանկական և դիետիկ նշանակության սննդամթերքում, որոնց համար սահմանված են համապատասխան պահանջներ:

42. Սննդամթերքի առանձին տեսակներում հսկվում են ազոտ պարունակող միացությունների պարունակությունը, հիստամինը՝ սաղմոնանմանների, թյունիկանմանների, ծովատառեխանմանների, թյունոսանմանների ձկնատեսակների ընտանիքներում, նիտրատները՝ պտուղ-բանջարեղենային արտադրանքում, N-նիտրոզամինները՝ ձկներում և ձկնամթերքում, մսամթերքում և գարեջրային ածիկում:

43. Ջրային որսի ոչ ձկնային օբյեկտներում (կակղամորթեր, ծովախեցգետինների ներքին օրգաններ) վերահսկվում են ֆիկոտոքսինները:

44. Ճարպային մթերքներում հսկվում են օքսիդացման փչացման ցուցանիշները՝ թթվայնության թիվ և պերօքսիդային թիվ:

45. Սննդամթերքում չի թույլատրվում վարակիչ և մակաբուծային հիվանդություններ առաջացնող կամ համաձայն Միասնական պահանջների մարդու առողջության համար վտանգ ներկայացնող ախտածին մանրէների և մակաբուծական հիվանդությունների հարուցիչների, դրանց թույների առկայությունը: Այն սննդամթերքը, որոնց համար սույն որոշման հավելված N 3-ով սահմանված չեն ախտածին մանրէների բացակայության չափանիշներ, մթերքի 25 գ.(սմ³) զանգվածում (ծավալում) դրանց որոշումը կատարվում է տվյալ մթերքով պայմանավորված արտադրության տարածաշրջանում համաճարակային իրավիճակի վատացման ժամանակ:

46. Հում մսի (խոշոր եղջրավոր կենդանիների և խոզի, գառան, ձիու) մեջ չի

թույլատրվում մակաբուծային հիվանդությունների հարուցիչների՝ ֆինաների (ցիստիցերկերի), տրիխինելայի և էսինոկոկերի թրթուրների, սարկոցիստի և տօքսոպլազմի ցիստաների առկայությունը:

47. Ձկների, խեցգետնակերպերի, կակղամորթերի, երկկենցաղների, սողունների և դրանց վերամշակման արտադրանքում չի թույլատրվում մարդու առողջության համար վտանգավոր մակաբույծների կենդանի թրթուրների առկայությունը:

48. Թարմ և թարմ սառեցված սեղանի կանաչիներում, բանջարեղենում, մրգերում և հատապտուղներում չի թույլատրվում հելմինթների ձվերի և աղիքային ախտածին նախակենդանիների ցիստաների առկայությունը:

49. Սննդամթերքի անվտանգության մանրէաբանական ցուցանիշների հիգիենիկ նորմատիվները ընդգրկում են միկրոօրգանիզմների հետևյալ խմբերը՝

1) սանիտարացուցադրական, որոնց շարքին դասվում են մեզոֆիլ աէրոբ և ֆակուլտատիվ անաէրոբ մանրէների քանակը (ՄԱՖԱՄ), աղիքային ցուպիկի խմբի մանրէներ՝ կոլիձևեր(ԱՑԽՄ), Enterobacteriaceae ցեղի մանրէներ, էնտերոկոկեր,

2) պայմանական-ախտածին մանրէներ՝ E. coli (աղիքային ցուպիկ), S. aureus (ոսկեգույն ստաֆիլակոկ), Proteus, B. Cereus ցեղերի մանրէներ և սուլֆիտառաջացնող կլոստրիդիաներ, Vibrio parahaemolyticus,

3) ախտածին մանրէներ, այդ թվում՝ սալմոնելաներ և Listeria monocytogenes,

4) Yersinia ցեղի և այլ ախտածին մանրէներ՝ սննդամթերքի արտադրության տարածաշրջանում տիրող համաճարակային իրավիճակին համապատասխան,

5) փչացման մանրէներ՝ խմորասնկեր և բորբոսասնկեր, կաթնաթթվային մանրէներ,

6) մերանային միկրոֆլորայի մանրէներ և պրոբիոտիկ մանրէներ (կաթնաթթվային մանրէներ, խմորասնկեր, բիֆիդոմանրէներ, լակտոբացիլներ և այլն)՝ տեխնոլոգիական միկրոֆլորայի նորմավորվող մակարդակով մթերքում և պրոբիոտիկ մթերքներում:

50. Սննդամթերքի անվտանգության մանրէաբանական ցուցանիշների նորմավորումը մանրէների խմբերի մեծամասնության համար իրականացվում է այլընտրանքային սկզբունքով, այսինքն՝ նորմավորվում է մթերքի այն զագվածը, որում չեն թույլատրվում աղիքային ցուպիկի խմբի մանրէները, պայմանական ախտածին մանրէների մեծամասնությունը, ինչպես նաև ախտածին մանրէները, այդ թվում՝ սալմոնելաները և Listeria monocytogenes: Մյուս դեպքերում նորմատիվը արտացոլում է 1 գ. (մլ.) մթերքում գաղութառաջացնող միավորների քանակը (ԳԱՄ/գ, մլ.):

51. Պահածոյացված սննդամթերքի անվտանգության չափանիշներ (արդյունաբերական մանրէազերծվածություն) են հանդիսանում տվյալ պահածոների տեսակի համար սահմանված պահպանման ջերմասիճանի պայմաններում զարգանալու և բազմանալու հնարավորություն ունեցող մանրէների և մարդու առողջության համար վտանգավոր մանրէների և դրանց թույների բացակայությունը պահածոյացված սննդամթերքում:

52. Կենսաբանական ակտիվ նյութերը, սննդամթերքի բաղադրիչները և դրանց աղբյուր հանդիսացող մթերքները, որոնք օգտագործվում են կենսաբանական ակտիվ

հավելումների արտադրության համար, պետք է ապահովեն դրանց արդյունավետությունը և վտանգավոր ազդեցության բացակայությունը մարդու առողջության վրա: Կենսաբանական ակտիվ հավելումները հանդիսանում են սննդային, սննդի բնական (բնականին համանման) կենսաբանական ակտիվ նյութերի (բաղադրիչների), պրոբիոտիկ և պրեբիոտիկ բաղադրիչների աղբյուրներ, որոնք ապահովում են դրանց համարժեք ընդունումը մարդու օրգանիզմ սննդում անմիջապես օգտագործելու կամ սննդամթերքի բաղադրությունում ներառելու ժամանակ:

53. Կենսաբանական ակտիվ հավելումները, սննդամթերքի բաղադրիչները և դրանց աղբյուր հանդիսացող մթերքները, որոնք օգտագործվում են կենսաբանական ակտիվ հավելումների արտադրությունում, չունեն վտանգավոր ազդեցություն մարդու առողջության վրա և չեն պարունակում հոգեմետ, թունավոր նյութեր, թմրանյութեր, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և դոպինգային նյութեր, որոնք սահմանված են WADA-ի գործող ցանկով:

54. Կենսաբանական ակտիվ հավելումները համապատասխանում են Միասնական սանիտարական պահանջներով սահմանված սննդամթերքի անվտանգության հիգիենիկ նորմատիվներին:

55. Հիմնական կենսաբանական ակտիվ նյութերի ցանկը և կենսաբանական ակտիվ հավելումների կազմում մեծահասակների համար դրանց օրական սպառման թույլատրելի մեծությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Կենսաբանական ակտիվ նյութերի պարունակությունը կենսաբանական ակտիվ հավելումների օրական չափաբաժնում, որը նշված է կիրառման հրահանգներում, պետք է կազմի սպառման նույնական մակարդակի 15%-ից ոչ պակաս և չգերազանցի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դրանց սպառման վերին թույլատրելի մակարդակը:

56. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են բույսերը և դրանց վերամշակման արտադրանքը, կենդանական ծագման օբյեկտները, մանրէները, սնկերը և կենսաբանական ակտիվ հավելումները, որոնք ժամանակակից գիտական տվյալներով ներկայացնում են վտանգ մարդու կյանքի և առողջության համար և չեն թույլատրվում օգտագործման կենսաբանական ակտիվ հավելումների արտադրության ժամանակ:

57. Մեծահասակների սննդում կենսաբանական ակտիվ հավելումների արտադրության ժամանակ օգտագործելու համար նախատեսված վիտամինների և հանքային աղերի ձևերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

58. Բուսական ծագման հումքի հիմքով կենսաբանական ակտիվ հավելումների բաղադրությունում կենսաբանական ակտիվ նյութերի պարունակությունը, որոնց համար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չեն սպառման համարժեք և վերին թույլատրելի մակարդակներ, չի կարող գերազանցել ավանդական բժշկության դեղամիջոցների այդ նյութերի կիրառման համար որոշված միանվագ բուժիչ դեղաչափի մեծության 50%-ը :

59. Հարստացված սննդամթերքի (բացառությամբ վաղ հասակի երեխաների

համար սննդամթերքի և կենսաբանական ակտիվ հավելումների) արտադրության ժամանակ օգտագործվող վիտամինների և հանքային աղերի ձևերը սահմանվում են սույն որոշման N 6 հավելվածով:

60. Վաղ հասակի երեխաների համար նախատեսված սննդամթերքի և 1,5-ից 3 տարեկան երեխաների սննդի համար կենսաբանական ակտիվ հավելումների արտադրության ժամանակ թույլատրվում է օգտագործել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված վիտամինների և հանքային աղերի ձևերը: Չի թույլատրվում 1,5-ից 3 տարեկան երեխաների սննդի համար կենսաբանական ակտիվ հավելումների կազմում վիտամինների և հանքային աղերի օրական չափաբաժնի գերազանցումը նշված նյութերում Հասաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված օրական ֆիզիոլոգիական կարիքի 50%:

61. Վաղ հասակի երեխաների համար (մինչև 3 տարեկան) կենսաբանական ակտիվ հավելումների արտադրության ժամանակ չի թույլատրվում վայրի բույսերի և դեղաբույսերի օգտագործումը, բացառությամբ սամիթի, հոռոմսամիթի և երիցուկի: 3-ից 14 տարեկան երեխաների սննդի համար նախատեսված կենսաբանական ակտիվ հավելումների և վաղ հասակի երեխաների համար մանկական բուսական թեյերի (ըմպելիքների) արտադրության ժամանակ օգտագործման թույլատրված բուսական հումքի ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

62. 3-ից 14 տարեկան երեխաների սննդում թույլատրվում է օգտագործել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված վիտամինները ու հանքային աղերը, սննդային նրբաթելերը, պրոբիոտիկները և պրեբիոտիկները, ինչպես նաև դեղորայքային հումքը: Չի թույլատրվում 3 տարեկանից բարձր երեխաների սննդի համար կենսաբանական ակտիվ հավելումների օրական չափաբաժնի գերազանցումը (նշված նյութերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված օրական ֆիզիոլոգիական կարիքի %) A և D վիտամինների, հանքային նյութերի (սելեն, պղինձ, ցինկ, յոդ, երկաթ) համար 100%, ջրալուծ վիտամինների, այլ ճարպալուծ վիտամինների և այլ հանքային աղերի համար՝ 200%:

63. Մարզիկների սննդի և դիետիկ (բուժիչ և կանխարգելիչ) նշանակության համար հատուկ նշանակության սննդամթերքի (բացառությամբ վաղ հասակի երեխաների համար նախատեսված սննդամթերքի) արտադրության ժամանակ օգտագործվող վիտամինների և հանքային աղերի ձևերը սահմանվում են սույն որոշման N 7 հավելվածով:

64. Սննդամթերքի սննդային արժեքի ցուցանիշները հիմնավորվում են արտադրողի (տեխնիկական փաստաթղթեր մշակողների) կողմից, հետազոտության մեթոդների հիման վրա և/կամ հաշվի առնելով սննդամթերքի բաղադրագիրը և հումքի բաղադրության տվյալները հաշվարկային մեթոդի կիրառմամբ:

65. Մանկական սննդամթերքը, հաշվի առնելով երեխայի տարիքը, համապատասխանում է նրա օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակին և անվտանգ է երեխայի

առողջության համար:

66. Մանկական սննդամթերքը, ինչպես նաև դրա արտադրության համար անհրաժեշտ հումքը և բաղադրամասերը, հղի և կերակրող կանանց համար սննդամթերքը համապատասխանում են անվտանգության ու սննդային արժեքի հատուկ (առանձին) հիգիենիկ նորմատիվներին:

67. Սննդամթերքում օգտագործման համար թույլատրվում են ժամանակակից գիտական հետազոտությունների տվյալներով մարդու և ապագա սերունդների կյանքի ու առողջության վրա վտանգավոր ազդեցություն չունեցող սննդային հավելումները:

68. Սննդային հավելումների կիրառումը և սննդամթերքում դրանց պարունակության թույլատրելի մակարդակները, տեխնոլոգիական օժանդակ միջոցների նկատմամբ պահանջները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված պահանջներին: Սննդային հավելումների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգության պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

69. Սննդային հավելումների և դրանց օժանդակ միջոցների անվտանգության ու որակի ցուցանիշները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիգիենիկ նորմատիվներին:

70. Այն նյութերի վերաբերյալ, որոնց համար պարունակության նորմավորումը սահմանված է «չի թույլատրվում» նշանակությունով, ենթադրվում է սննդամթերքում դրանց բացակայությունը այն քանակությամբ, որը չի գերազանցում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև համաձայնեցված նվազագույն պահանջվող մակարդակները:

VI. ՊԱՀՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

71. Սննդամթերքի պահման ու փոխադրման ժամանակ սննդամթերքը պահպանվում է ցանկացած տեսակի աղտոտումից և փչացումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԻՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԱՆԿ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

| ԱՏԳ ԱԱ խմբի անվանումը | Ապրանքի անվանումը | ԱՏԳ ԱԱ կոդը |
|-----------------------------|--|---|
| Խումբ 02. | Միս և սննդային մսային ենթամթերք | 0210 |
| Խումբ 03 | Ձուկ և խեցգետնակերպեր, կակղամորթեր և այլ ջրային անողնաշարավորներ | 0305, 0306-ից, 0307-ից |
| Խումբ 04 | Կաթնային արտադրանք, թռչնի ձվեր, բնական մեղր, կենդանական ծագման սննդամթերք, այլ տեղերում չհիշատակված կամ չներառված | 0401, 0402, 0403, 0404, 0405, 0406, 0407-ից, 0408 19 810 0-ից, 0408 19 890 0-ից, 0408 99 800 0, 0409 00 000 0, 0410 00 000 0- ից |
| Խումբ 07 | Բանջարեղեն և որոշ ուտելի արմատապտուղներ և պալարապտուղներ՝ 0701-ից | 0702 00 000, 0703, 0704, 0706, 0707 00, 0708, 0709, 0712, 0713, 0714 |
| Խումբ 08 | Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային պտուղների կլեպ կամ սեխի կեղև | 0801-ից, 0802-ից, 0803-ից, 0804-ից, 0805-ից, 0806- ից, 0810-ից, 0811, 0812, 0813, 0814 00 000 0 |
| Խումբ 09 | Սուրճ, թեյ, մատե կամ պարագվայական թեյ և համեմունքներ (որոնք օգտագործվում են սննդում կամ սննդամթերքի արտադրությունում) | 0901-ից, 0902, 0903 00 000 0, 0904, 0905, 0906, 0907, 0909, 0910 |
| Խումբ 11 | Ալրաաղացային-ձավարեղենային արտադրանք, ածիկ, օսլաներ, ինուլին, ցորենի թաղանթանյութ (որոնք օգտագործվում են սննդում կամ սննդամթերքի արտադրությունում) | 1101 00-ից, 1102, 1103, 1105, 1106, 1107, 1108 |
| Խումբ 12 | Յուղատու սերմեր և պտուղներ, այլ սերմեր, պտուղներ և հացահատիկ, տեխնիկական նպատակների համար դեղաբույսեր և բույսեր, ծղոտև ֆուրաժ | 1201-ից, 1202, 1203 00 000 0, 1204 00, 1205, 1206 00, 1207, 1208, 1210, 1212 |

| | | |
|----------|---|---|
| Խումբ 13 | Բնական չմաքրված խեժեր, անձրուֆ և այլ բուսական հյութեր և հյութահանուկներ | 1301-ից, 1302 |
| Խումբ 15 | Ճարպեր և յուղեր կենդանական կամ բուսական ծագման ու դրանց տրոհման արդյունքում ստացված մթերքներ, պատրաստի սննդային ճարպեր, կենդանական կամ բուսական ծագման մեղրամոմեր | 1501-ից, 1502, 1503 00, 1504, 1506 00 000 0, 1507, 1508, 1509, 1510 00, 1511, 1512, 1513, 1514, 1515, 1516, 1517 |
| Խումբ 16 | Պատրաստի սննդամթերք մսից, ձկնից կամ խեցգետնակերպերից, կակղամորթերից կամ այլ ջրային անողնաշարավորներից | 1601 00-ից, 1602, 1603 00, 1604, 1605 |
| Խումբ 17 | Շաքար և հրուշակեղենային արտադրանք շաքարից | 1701-ից, 1702, 1703, 1704 |
| Խումբ 18 | Կակաո և դրանից մթերքներ | 1801 00 000 0-ից, 1803, 1804 00 000 0, 1805 00 000 0, 1806 |
| Խումբ 19 | Պատրաստի մթերք հացաբույսերի հացահատիկից, այլորից, օսլայից կամ կաթից, այլային հրուշակեղեն | 1901, 1902, 1903 00 000 0, 1904, 1905 |
| Խումբ 20 | Բանջարեղենի, մրգերի, ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից ստացված արտադրանք | 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006 00, 2007, 2008, 2009 |
| Խումբ 21 | Տարբեր սննդամթերք | 2101-ից, 2102, 2103, 2104, 2105 00, 2106 |
| Խումբ 22 | Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ, քացախ | 2201-ից, 2202, 2203 00, 2204, 2205, 2206 00, 2208, 2209 00 |
| Խումբ 25 | Աղ, ծծումբ, հողեր և քար, սվաղելու նյութեր, կիր և ցեմենտ | 2501 00 91 |
| Խումբ 29 | Օրգանական քիմիական միացություններ | 2915, 2916, 2917, 2918, 2919, 2920, 2921, 2922, 2923, 2924, 2925, 2926, 2927 00 000 0, 2928 00, 2929, 2930, 2931, 2932, 2933, 2934, 2935 00, 2936 |
| Խումբ 33 | Եթերային յուղեր և ռեզինոիդներ, օժանելիքային, կոսմետիկ կամ հարդարանքի այլ միջոցներ | 3301-ից, 3302 |
| Խումբ 35 | Սպիտակուցային նյութեր, ձևափոխված սոսնձանյութ, սոսինձներ, ֆերմենտներ | 3501, 3502, 3503 00, 3504 00, 3505, 3507 |

Աղյուսակ 1.

**Միս և մսամթերք, թռչուն, ձվեր և դրանց վերամշակումից ստացված արտադրանք՝
խումբ 02, խումբ 04-ից (թռչնի ձու), խումբ 16 (սպառման համար պատրաստի սննդամթերք)**

| Արտադրանքի անվանումը | Ցուցանիշները | Թույլատրելի մակարդակները, մգ/կգ, ոչ ավելին | Ծանոթություն |
|--|--|---|--------------------------|
| 1.1 Միս, այդ թվում՝ կիսապատրաստվածքներ, շոգեխաշած, պաղեցված, քիչ սառեցված, սառեցված (բոլոր տեսակի մորթի, որսի ենթակա և վայրի կենդանիների) այդ թվում՝ | | | |
| | կապար | 0,5 | |
| | արսեն | 0,1 | |
| | կաղմիում | 0,05 | |
| | սնդիկ | 0,03 | |
| | <p align="center">Հակաբիոտիկներ (բացի վայրի կենդանիների) (Անհրաժեշտ է հսկել նաև այն հակաբիոտիկների մնացորդային քանակները, որոնք օգտագործվել են պարենային հումքի արտադրության ժամանակ (համաձայն սույն որոշման N2 հավելվածի 40-րդ կետի): Օգտագործման համար պատրաստի կենդանական ծագման վերամշակված մթերքներում լևոմիցետինի (քլորամֆենիկոլի) առկայության հսկողությունը իրականացվում է սահմանված կարգով հաստատված հսկողության մեթոդի առկայության դեպքում: Մինչև նշված մեթոդի հաստատումը հսկողությունն իրականացվում է հումքի համապատասխան: Ձկներում, ջրային որսի ոչ ձկնային օբյեկտներում, դրանցից ստացված մթերքներում, մեղրում տետրացիկլինի խմբի հակաբիոտիկների պարունակության հսկողությունը իրականացվում է սահմանված կարգով հաստատված հսկողության մեթոդի առկայության դեպքում:)</p> | | |
| | լևոմիցետին (քլորամֆենիկոլ) | չի թույլատրվում | < 0,01 մգ/կգ < 0,0003 |
| | տետրացիկլինի խումբ | չի թույլատրվում | < 0,01 մգ/կգ |
| | բացիտրացին | չի թույլատրվում | < 0,02 մգ/կգ |
| | <p align="center">Պեստիցիդներ (Անհրաժեշտ է հսկել նաև այն պեստիցիդների մնացորդային քանակները, որոնք օգտագործվել են պարենային հումքի արտադրության ժամանակ:)</p> | | |
| | ՀՔՑՀ (α-, β-, γ-իզոմերներ) | 0,1 | |
| | ԴԴՏ և դրա մետաբոլիտներ | 0,1 | |
| | <p align="center">Դիօքսիններ</p> <p>Դիօքսինները որոշվում են հումքում դրանց հնարավոր առկայության մասին հիմնավորված ենթադրության առկայության դեպքում՝ 1) դրանց առավելագույն մակարդակը չի վերաբերում ճարպի 1%-ից պակաս պարունակող մթերքներին 2) այստեղ և հետագայում դիօքսինները ներկայացնում են իրենցից պոլիքլորացված դիբեզոլիդիօքսինների և (ՊՔԴԴ) և պոլիքլորացված դիբենզոֆուրանների (ՊՔԴՖ) գունարը և արտահայտվում են որպես թունավոր համարժեքների գումար՝ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության սանդղակի համապատասխան:</p> | | |
| | | 0,000003 տավար, ոչխար (ճարպի վերահաշվարկով) | |
| | | 0,000001 խոզ (ճարպի վերահաշվարկով) | |

| 1.1.1. Թարմ միս (մորթի ենթակա բոլոր կենդանիների) | Մանրէաբանական ցուցանիշներ | | |
|---|--|---------------------|---|
| Թարմ մսեղիք, կիսամսեղիք, քառորդված և կտրատած | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 10 | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 1,0 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| Թեթև պաղեցված մսեղիք, կիսամսեղիք, քառորդված և կտրատած | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 1 x 10 ³ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,1 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| պաղեցված մսեղիք, կիսամսեղիք, քառորդված և կտրատած | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 1 x 10 ³ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,1 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Proteus | չի թույլատրվում | 7 օրից ավելի պիտանիության ժամկետով արտադրանքի համար՝ 0,1 գ. մթերքում, մանկական, դիետիկ, բոժ-կանխարգելիչ սննդի համար՝ 1,0 գ մթերքում |
| պաղեցված մսեղիք, կիսամսեղիք, քառորդված և կտրատած (ոսկրով, ոսկրահանված), փաթեթավորված վակուումով կամ գազային մթնոլորտում ձևափոխված | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 1 x 10 ⁴ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), | չի թույլատրվում | 0,01 գ մթերքում |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, | չի թույլատրվում | 25 գ. մթերքում |
| | Լիստերիա | չի | 25 գ. մթերքում |

| | | | |
|--|--|---|--|
| | մոնոցիտոգենես (L. monocytogenes) | թույլատրվում | |
| | Խմորասնկեր, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 1 x 10 ³ | |
| | Սովֆիտառաջաց նոդ կլոստրիդիաներ 0,01 գ մթերքում | չի թույլատրվում | |
| 1.1.2. Մորթի ենթակա կենդանիների սառեցված միս , | Մանրէաբանական ցուցանիշներ | | |
| մսեղիք, կիսամսեղիք, քառորդված և կտրատած | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 1 x 10 ⁴ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,01 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| ոսկրով, ոսկրահանված, ջլային մսի զանգված | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 5 x 10 ⁵ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,001 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| մսային զանգված մինչև ոսկրահանումը | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 5 x 10 ⁶ նմուշի պատրաստումը առանց մակերեսի ֆլամբիրացման | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,0001 գ մթերքում | չի թույլատրվում նմուշի պատրաստումը առանց մակերեսի ֆլամբիրացման | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում նմուշի պատրաստումը առանց մակերեսի ֆլամբիրացման | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) | չի թույլատրվում նմուշի պատրաստումը | |

| | | | |
|---|--|--------------------------------|--|
| | 25 գ. մթերքում | առանց մակերեսի ֆլամբիրացման | |
| 1.1.3. Մսային կիսապատրաստվածքներ ոչ ոսկրային (պաղեցված, թեթև պաղեցված, սառեցված), այդ թվում՝ մարինացված | Մանրէաբանական ցուցանիշներ | | |
| խոշոր կտորներով | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 5 x 10 ⁵ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,001 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| մանր կտորներով | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 1 x 10 ⁶ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,001 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| 1.1.4. Մսի կտրտված կիսապատրաստվածքներ (պաղեցված և սառեցված) | Մանրէաբանական ցուցանիշներ | | |
| ձև տված, այդ թվում՝ թաթախած | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 5 x 10 ⁶ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,0001 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Բորբոսասնկեր, ԳԱՄ/ գ, ոչ ավելի - 1 ամսից ավելի պիտանիության ժամկետ ունեցող կիսապատրաստվ ածքների համար | 500 | |
| կիսապատրաստվածքներ խմորի մեջ, լցոնային (դրմիկներ, դոլմա), կտրտված միս | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 2 x 10 ⁶ | |

| | | | |
|--|---|-----------------|--|
| պարունակող կիսապատրաստվածքներ | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,0001 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Բորբոսասանկեր, ԳԱՄ/ գ, ոչ ավելի - 1 ամսից ավելի պիտանիության ժամկետ ունեցող կիսապատրաստվածքների համար | 500 | |
| լցոն խոզի, տավարի և այլ մորթի ենթակա կենդանիների մսից | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 5×10^6 | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,0001 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| 1.1.5. Մսաուկրային կիսապատրաստվածքներ (մանր, խոշոր կտորներով, մասնաբաժիններով) | Մանրէաբանական ցուցանիշներ | | |
| | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 5×10^6 | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,0001 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| 1.2. Մորթի ենթակա կենդանիների ենթամթերք, պաղեցված, սառեցված (յարդ. երիկամներ, լեզու, ուղեղ, սիրտ), խոզի կաշի, սննդային արյուն և դրանցից պատրաստված մթերք | Թունավոր տարրեր | | |
| | կապար | 0,6 | |
| | | 1,0 | |
| | | երիկամներ | |
| | արսեն | 1,0 | |
| | կադմիում | 0,3 | |
| | | 1,0 | |
| | | երիկամներ | |
| սնդիկ | 0,1 | | |
| | 0,2 | | |

| | երիկամներ | |
|---|--|---|
| | <p align="center">Հակաբիոտիկներ (բացի վայրի կենդանիներից)</p> <p>(Անհրաժեշտ է հսկել նաև այն հակաբիոտիկների մնացորդային քանակները, որոնք օգտագործվել են պարենային հումքի արտադրության ժամանակ (համաձայն սույն որոշման N2 հավելվածի 40-րդ կետի):</p> <p>Օգտագործման համար պատրաստի կենդանական ծագման վերամշակված մթերքներում լևոմիցետինի (քլորամֆենիկոլի) առկայության հսկողությունը իրականացվում է սահմանված կարգով հաստատված հսկողության մեթոդի առկայության դեպքում: Մինչև նշված մեթոդի հաստատումը հսկողությունն իրականացվում է հումքի համապատասխան:</p> <p>Ձկներում, ջրային որսի ոչ ձկնային օբյեկտներում, դրանցից ստացված մթերքներում, մեղրում տետրացիկլինի խմբի հակաբիոտիկների պարունակության հսկողությունը իրականացվում է սահմանված կարգով հաստատված հսկողության մեթոդի առկայության դեպքում:)</p> | |
| | լևոմիցետին (քլորամֆենիկոլ) | <p align="center">չի թույլատրվում</p> <p align="center">< 0,01 մգ/կգ < 0,0003</p> |
| | տետրացիկլինի խումբ | <p align="center">չի թույլատրվում</p> <p align="center">< 0,01 մգ/կգ</p> |
| | բացիտրացին | <p align="center">չի թույլատրվում</p> <p align="center">< 0,02 մգ/կգ</p> |
| | <p align="center">Պեստիցիդներ</p> <p>Անհրաժեշտ է հսկել նաև այն պեստիցիդների մնացորդային քանակները, որոնք օգտագործվել են պարենային հումքի արտադրության ժամանակ:)</p> | |
| | ՀՔՑՀ (α-, β-, γ-իզոմերներ) | <p align="center">0,1</p> |
| | ԴԴՏ և դրա մետաբոլիտներ | <p align="center">0,1</p> |
| | <p align="center">Դիօքսիններ</p> <p>Դիօքսինները որոշվում են հումքում դրանց հնարավոր առկայության մասին հիմնավորված ենթադրության առկայության դեպքում՝</p> <p>1) դրանց առավելագույն մակարդակը չի վերաբերում ճարպի 1%-ից պակաս պարունակող մթերքներին</p> <p>2) այստեղ և հետագայում դիօքսինները ներկայացնում են իրենցից պոլիքլորացված դիբեզոլդիօքսինների և (ՊՔԴԴ) և պոլիքլորացված դիբենզոֆուրանների (ՊՔԴՖ) գունարը և արտահայտվում են որպես թունավոր համարժեքների գումար՝ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության սանդղակի համապատասխան:</p> | |
| | | <p align="center">0,000006 յարդ և դրանցից պատրաստված մթերք (ճարպի վերահաշվարկով)</p> |
| <p>1.2.1. Մորթի ենթակա կենդանիների ենթամթերք, պաղեցված, սառեցված, սաղեցված զանգվածով, խոզի կաշի</p> | <p align="center">Մանրէաբանական ցուցանիշներ</p> | |
| | <p>Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում</p> | <p align="center">չի թույլատրվում (նմուշի պատրաստումը սառեցված զանգվածների ֆլամբիրացմամբ)</p> |
| <p>Լիստերիա մոնոցիտոգենես (L. monocytogenes) 25 գ. մթերքում</p> | <p align="center">չի թույլատրվում (նմուշի պատրաստումը սառեցված զանգվածների ֆլամբիրացմամբ)</p> | |
| <p>1.2.2. Սննդային արյուն</p> | <p align="center">Մանրէաբանական ցուցանիշներ</p> | |

| | | | |
|---|---|-----------------------|---|
| | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 5 x 10 ⁵ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,1 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Սուլֆիտառաջաց նող կլոստրիդիումներ 1,0 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Ոսկեգույն ստաֆիլակոկ (S. aureus) 1 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| 1.2.3. Արյան վերամշակման մթերքներ | Մանրէաբանական ցուցանիշներ | | |
| սննդային պլումին | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 2,5 x 10 ⁴ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,1 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Սուլֆիտառաջաց նող կլոստրիդիումներ 1,0 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Ոսկեգույն ստաֆիլակոկ (S. aureus) և պրոտեուս Proteus 1 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| արյան պլազմայի (ջիճուկի) չոր խտանյութ | ՄԱՖԱՄ, ԳԱՄ/ գ, ոչ ավելի | 5 x 10 ⁴ | |
| | ԱՑԽՄ (կոլի ձևեր), 0,1 գ մթերքում | չի թույլատրվում | |
| | Սուլֆիտառաջաց նող կլոստրիդիումներ 1,0 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| | Ախտածին, ա/թ սալմոնելաներ, 25 գ. մթերքում | չի թույլատրվում | |
| 1.3. Տավարի, խոզի, ոչխարի և այլ մորթի ենթակա կենդանիների ճարպ-հումք (պաղեցված, սառեցված), խոզի ճարպ և դրանից պատրաստված մթերք | Համաձայն «Յուղային հումք և ճարպային մթերք» բաժնի | | |
| 1.4. Երշիկեղեն, մորթի ենթակա բոլոր տեսակի կենդանիների մսից արտադրանք, խոհարարական արտադրանք մսից | Թունավոր տարրեր | | Երշիկեղենի և մսաբուսային պահածոների համար անվտանգության ցուցանիշների հաշվարկը կատարվում |
| | կապար | 0,5 | |
| | արսեն | 0,1 | |
| | կադմիում | 0,05 | |
| | սնդիկ | 0,03 | |

| | | | |
|--|----------------------------|---|---|
| | բենզ(ա)պիրեն | 0,001 (ապխտած մթերքի համար) | է հումքի հիմնական տեսակով(ներով) ինչպես զանգվածային մասով, այնպես էլ նորմավորվող աղտոտիչների թույլատրելի խտություններով |
| Հակաբիոտիկներ (բացատրությամբ վայրի կենդանիների) | | | |
| <p>(Անհրաժեշտ է հսկել նաև այն հակաբիոտիկների մնացորդային քանակները, որոնք օգտագործվել են պարենային հումքի արտադրության ժամանակ (համաձայն սույն որոշման 40-րդ կետի):</p> <p>Օգտագործման համար պատրաստի կենդանական ծագման վերամշակված մթերքներում լևոմիցետինի (քլորամֆենիկոլի) առկայության հսկողությունը իրականացվում է սահմանված կարգով հաստատված հսկողության մեթոդի առկայության դեպքում: Մինչև նշված մեթոդի հաստատումը հսկողությունն իրականացվում է հումքի համապատասխան:</p> <p>Ձկներում, ջրային որսի ոչ ձկնային օբյեկտներում, դրանցից ստացված մթերքներում, մեղրում տետրացիկլինի խմբի հակաբիոտիկների պարունակության հսկողությունը իրականացվում է սահմանված կարգով հաստատված հսկողության մեթոդի առկայության դեպքում:)</p> | | | |
| | լևոմիցետին (քլորամֆենիկոլ) | չի թույլատրվում | < 0,01 մգ/կգ < 0,0003 |
| | տետրացիկլինի խումբ | չի թույլատրվում | < 0,01 մգ/կգ |
| | բացիտրացին | չի թույլատրվում | < 0,02 մգ/կգ |
| Պեստիցիդներ | | | |
| <p>Անհրաժեշտ է հսկել նաև այն պեստիցիդների մնացորդային քանակները, որոնք օգտագործվել են պարենային հումքի արտադրության ժամանակ:)</p> | | | |
| | ՀՔՏՀ (α-, β-, γ-իզոմերներ) | 0,1 | |
| | ԴԴՏ և դրա մետաբոլիտներ | 0,1 | |
| Դիօքսիններ | | | |
| <p>Դիօքսինները որոշվում են հումքում դրանց հնարավոր առկայության մասին հիմնավորված ենթադրության առկայության դեպքում</p> <p>1) դրանց առավելագույն մակարդակը չի վերաբերում ճարպի 1%-ից պակաս պարունակող մթերքներին</p> <p>2) այստեղ և հետագայում դիօքսինները ներկայացնում են իրենցից պոլիքլորացված դիբեզոլդիօքսինների և (ՊՔԴԴ) և պոլիքլորացված դիբենզոֆուրանների (ՊՔԴՖ) գունարը և արտահայտվում են որպես թունավոր համարժեքների գումար: Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության սանդղակի համապատասխան:</p> | | | |
